

լը¹¹, յիրաւի աննախագէտ Հղօրուծիւն էր ձեռք բերել եւ լիովին ի վիճակի էր 100 հազարանոց բանակ դուրս բերել:

Այս շրջանում Սմբատ Ա.-ն փորձում էր ստեղծել կենտրոնացուած բանակ՝ շեշտը դնելով կայուն ստորաբաժանումներ՝ գումարտակներ ստեղծելու վրայ, որոնք ներառում էին եւ իշխանական, եւ թագաւորական զօրքերը: Սմբատ Ա.-ի ջանքերը ուղղուած էին բանակն ամբողջութեամբ ուժեղացնելուն՝ կենտրոնացուած ռազմական կառոյց ստեղծելուն:

Սակայն բանակի կազմում նկատուող քանակական աճը կատարւում է իշխանական զօրքի հաշուին: Սմբատ Ա.-ի զօրքերի մէջ մտնում էին Հայաստանի բոլոր իշխանութիւնների, նաեւ՝ Վիրքի եւ Աղուանքի տրամադրած զնդերն ու գումարտակները: Միասնական պետութեան ժամանակահատուածի իշխանական զօրքը յաճախակի է յիշատակւում Սմբատ Ա.-ի ձեռնարկումներին կապակցութեամբ¹²: Առաւել մանրամասն են Անանուն Զրուցագրի վկայութիւնները՝ կապուած Սմբատ Ա.-ի՝ դէպի Ափսաղք ձեռնարկած արշաւանքի հետ: Պատմիչը թուարկում է այն իշխաններին, ովքեր զօրք են տրամադրել Սմբատ Ա.-ին: Յիշատակւում են Արեւելից կողմանց (Աղուանքի) իշխան Սմբատը, Փառխոսի իշխան Հմայեակը, Աղձնիքի իշխան Գրիգորը, Վայոց Ձորի իշխան Ապուշամբը, Տայքի իշխան Գոռամը, Տարօնի իշխան Գաղիկը, Վասպուրականի իշխանը, Մոկաց իշխան Աշոտը, Անձեւացեաց իշխան Համակարը, Կորդուքի իշխանը, Գորոզի իշխանը, Ճողբի իշխանը¹³: Այստեղ փաստօրէն

11 Տե՛ս Բ. Առաքելեան, Երկրի միատրման ձգտումը եւ պայքար օտար նուաճողների դէմ: «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. III (ՀՀ ԳԱԱ հրատ.), Երեւան, 1976, էջ 33-34:

12 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 57, 62, Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 118, 123:

13 Անանուն Զրուցագիր, կարծեցեալ Յակոբ Բագրատունի, Պատմութիւն, ատաշարսն ու ծանօ-

նշուած են Աղուանքը, Արցախը, Աղձնիքը, Վայոց Ձորը, Տայքը, Տարօնը, Վասպուրականը, Մոկքը, Անձեւացիքը, Կորդուքը: Վերը յիշատակուած իշխանութիւնները, փաստօրէն, ընդգրկում են Հայաստանի տարածքի մեծ մասը: Զինավաճառի ճակատամարտի առիթով Դրասխանակերտցին յիշատակում է Սեւորդիների զօրքը¹⁴:

Թ. դարի վերջերին եւ ժ. դարի առաջին տասնամեակների ընթացքում, նոյնիսկ Աշոտ Բ-ի օրօք, արքունական զօրքի կազմում էին գտնւում նաեւ վրացական, ասիական ու արաբական ամիրայութիւնների զօրքերը: Վրաց (Տայք-Կղարջքի) տիրակալը ճանաչում էր Աշոտ Ա.-ի եւ Սմբատ Ա.-ի գերակայութիւնը, ինչն իր հերթին ենթադրում էր պատերազմի ժամանակ զօրքի տրամադրում. «Ըստ որում, եւ մեծ կուրապաղատն Վրաց, եւ համախոհք իւր՝ գեղեցիկ կարգաց ուղղութեամբ հաւանեալք եւ հնազանդեալք լինէին»¹⁵: Միջագետքի տիրակալ Ահմադի դէմ արշաւանքի ժամանակ Սմբատ Ա.-ի զօրքի կազմում էր նաեւ վրացական բանակը¹⁶: Վրաց թագաւորը Սմբատ Ա.-ի հետ միասին արշաւեց նաեւ Ափսաղաց (Արեւմտեան Վրաստանի) թագաւոր Կոստանդինի դէմ: «Եւ ապա արքայ Սմբատ զօրու բազմի դուռթ իմն ի միասին տուեալ եւ ընդ իւր եւս առեալ զթագաւորն Վրաց գնացին ի միասին հրոսակ ընդ յառաջ Կոստանդինի»¹⁷: Աշոտ Բ.-ի կառավարման տարիներին նրան զօրք էին տրամադրում ինչպէս Վրաց, այնպէս էլ Ափսաղաց թագաւորները: Այսպէս, Վրաց թագաւոր Ատրնեսէր եւ Աշոտ Բ.-ն միասին արշաւում են վրաց Գուրգէն իշխանի դէմ. «Բայց թագաւորն Աշոտ իբրեւ զկամակատարս զԴուին

թագրութիւնները Մ. Դարբիեան-Մելիքեանի. Երեւան, 1971, էջ 189:
14 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 218:
15 Նոյն տեղում, էջ 161:
16 Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 366:
17 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 200-201:

քաղաք իւր պատրաստեաց եւ ապա թիկունս առ ի գնալ ի նոցանէ դարձուցեալ՝ չուէ յաշխարհն Վրաց եւ անդ ընդ իւր զթագաւորն Վրաց Ատրնեսէրս առեալ՝ երկաքանչիւրք նոքա ի մարտ ընդ իշխանին Գուրգէնայ մտեալ՝ խնդրէին զիւրաքանչիւր վրէժս»¹⁸: Ուտիքի կառավարիչ Յլիկ Ամրամի ապստամբութեան ժամանակ Ափսաղաց թագաւորն էր օգնական զօրք տրամադրել Աշոտ Բ.-ին. «Իսկ թագաւորն Եգերացուց... Եւ ապա զմեծն տուեալ նմա օգնականութիւն եւ զօր բազում գումարեալ՝ տայ զայն ամենայն ի ձեռս նորա եւ զի նոքօք հանդերձ վրէժս ի թշնամեացն առցէ»¹⁹:

Արքունական բանակի կայացմանը խոչընդոտում էին սպարապետների կենտրոնախոյս ձգտումները: Արքունական տիրոյթներից հաւաքագրուած զօրքը գտնւում էր սպարապետի հրամանատարութեան տակ, իսկ վերջինս շատ դէպքերում հաւատարմութիւն չէր ցուցաբերում թագաւորի հանդէպ՝ յաւակնութիւններ դրսևորելով արքայական գահի նկատմամբ: Օրինակներ տեսնում ենք ինչպէս Աշոտ Ա.-ի մահից յետոյ, երբ նրա եղբայր սպարապետ Աբասը պայքար սկսեց գահին տիրանալու նպատակով²⁰, այնպէս էլ սպարապետ Աշոտ Շապուհեանի՝ զօրքերով Իւսուֆ Սաջեանի կողմը անցնելու դէպքում²¹: Վերջապէս, եղբօր՝ Աշոտ Բ.-ի դէմ ապստամբեց նաեւ Աբաս սպարապետը²²:

Սմբատ Ա.-ի կառավարման վերջին շրջանի դէպքերը ցոյց են տալիս, որ արքունական բանակը՝ իբրեւ կենտրոնական իշխանութեանը եւ թագաւորին հաւատարիմ ռազմական կառոյց, չկայացաւ:

18 Նոյն տեղում, էջ 308:
19 Նոյն տեղում, էջ 321-322:
20 Նոյն տեղում, էջ 144-145:
21 Ստեփանոս Տարօնցի Ասողիկ, էջ 164, Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 215:
22 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 304:

Մասնատուածութեան շրջանում Հայաստանի ռազմական կառոյցը քաղաքական համակարգի ազդեցութեամբ կրում է որոշակի փոփոխութիւններ: Տեղաշարժերի արդիւնքում շուրջ ժ. դարի կէսերին ստեղծւում է ապակենտրոնացուած ռազմական կառոյց: Վերջնականօրէն ձեւաւորւում են Հայոց բանակի կառուցուածքային երկու բաղադրիչները՝ մարզպանական եւ արքունական զնդերը:

Կենտրոնական իշխանութիւնն ամրապնդելու եւ իր գերակայութիւնը պահպանելու համար թագաւորը պէտք է ունենար նելու համար թագաւորն ուժ: Դա էլ նպաստագրեցիկ ռազմական ուժ: Դա էլ նպաստում է արքունական բանակի կայացմանը՝ սուրբ թագաւորական իշխանութեանը հաւերեւ թագաւորական իշխանութեանը հարաւորում կառոյց: Ենթադրում ենք, որ արքունական բանակը վերջնականօրէն ձեւաւորուել է Աշոտ Գ.-ի կառավարման ժամաւորութեան ժամանակը: Ենթադրում ենք, որ այդ փուլում է նակաշրջանում, քանի որ այդ փուլում է զարձնում պետութեան քաղաքական մասնաւորում պետութեան քաղաքական մասնաւորում պետութեանը, ինչը հրամայական էր նատուածութիւնը, ինչը հրամայական էր զարձնում թագաւորին հաւատարիմ եւ դարձնում թագաւորին հաւատարիմ եւ նի դէպքերի նկարագրութեան ժամանակ, երբ Աշոտ Գ.-ն իր զօրքերով ընդառաջ գնաց բիւզանդական կայսր Յովհաննէս Զմշկիկին, համահայկական բանակի թուաքանակը 80 հազար էր²³: Կարելի է ենթադրել, որ այդ բանակի առնուազան կէսը կազմում էին արքունական զօրքերը:

Մատթէոս Ուռհայեցին Գաղիկ Ա.-ի օրօք արքունական բանակը յիշատակում է «արքունական գունդ» անունամբ. «Յայսմ ամի ժողով արար զօրապետն Հայոց գմարգպետական գունդն քառասուն եւ հինգ հազար արանց քաջաց, գատ ի յարքունական գնդէն»: Համահայկական զօրքերի ընդհանուր թուաքանակը 100 հազար էր, որից 45 հազարը մարզպետական զօրքն

23 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17:

էր²⁴, Հետեւաբար 55 Հազարն արքունական զօրքն էր: Գագիկ Ա-ի կառավարման շրջանի Հեռ կապուած Ասողիկը յիշատակում է Անիում եղած զօրքերի մասին. «Եւ պատմել քաղաքին եւ զօրացն՝ եթէ ահա՛ մեռեալ է»²⁵: Այս վկայութիւնը կարելի է մեկնաբանել այն իմաստով, որ արքունական բանակի որոշ հատուածը մայրաքաղաքում գտնուող կանոնաւոր զօրամասերն էին: Արքունական բանակի մի հատուածը մայրաքաղաք Անիում էր տեղակայուած, ինչը յստակօրէն երեւում է նաեւ Աշոտ Դ-ի եւ Յովհաննէս Սմբատի միջեւ ընդհարումների ժամանակ՝ Անի քաղաքի զօրքի մարտի դուրս գալու փաստից. «Եւ իբրեւ լուա Յովհաննէս զգալն Աշոտոյ եղբօրն իւրոյ, հրամայեաց փող պատերազմի հարկանել, եւ ինքն ի գահոյսն անշարժ նստեալ կայր, վասն զի անհմուտ էր պատերազմի. եւ դղրդեալ քաղաքն Անի՝ ելանել ի պատերազմ ընդ Աշոտոյ քառասուն հազար Հետեւակաց եւ քսան հազար ձիաւորաց»²⁶: Եթէ հաւատ ընծայենք այս տեղեկութեանը, ապա Աշոտ Դ-ին յաջողուել էր հաւաքել 60 հազարանոց բանակ: Սակայն անգամ այս դէպքում այդ բանակը չէր կարող հաւաքուած լինել միայն նրա տիրոջներէից զգալի էր նաեւ զանազան դաշնակիցներից ստացուած օգնութիւնը:

Անիի վրայ բիւզանդական բանակի յարձակման ժամանակ, երբ թագաւորութեան լինել-չլինելու հարցն էր դրուած, հայոց զօրքը՝ մօտ 30 հազար, հաւաքուած է սպարապետ Վահրամ Պահլաւունու շուրջը: Ըստ երեւոյթին, սա արքունական զօրքն էր, քանի որ այն գտնուում էր Անիում, եւ Մատթէոս Ուռհայեցին չի նշում, որ այլ վայրերից զօրագնդեր եկած լինեն, Հետեւաբար՝ այստեղ խօսքը վերաբերում է արքունական բանակին: Հետաքրքիր է, որ

24 Նոյն տեղում, էջ 3:
 25 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, էջ 255:
 26 Մատթէոս Ուռհայեցի, էջ 8-9:

պատմիչը նշում է «մնացեալք զօրքն հայոց»²⁷, այսինքն՝ զօրքը նախկինում աւելի մեծաթիւ է եղել. այդ պահին նրա թիւը նուազել էր: Անկասկած է, որ արքունական բանակն ունեցել է 30 հազարից աւելի զինուոր, քանի որ արքունական տիրոջները բաւականին մեծ տարածք էին ընդգրկում: Արքունական գնդի մէջ էին գտնուում ոչ միայն անմիջականօրէն Անիի շահնշահին ենթակայ, այլեւ Անիի թագաւորութեան սահմանների մէջ գտնուող իշխանութիւնների, օրինակ՝ Պահլաւունիների զօրքերը:

Արքունական բանակի մի մասը մշտապէս ուղեկցում էր սպարապետին: Մատթէոս Ուռհայեցին նշում է, որ սպարապետ Վասակ Պահլաւունու տրամադրութեան տակ կար 5000 զինուոր, որոնք ցրուած էին իրենց բնակութեան վայրերում. «Մինչեւ զօրքն ժողովէին, վասն զի կային ընդ ձեռամբ նորա արք իբրեւ հինգ հազար»²⁸: Հաշուի առնելով հայոց բանակի հաւաքարման սկզբունքը՝ կարելի է ենթադրել, որ արքունական բանակի այլ հատուածները եւս իրենց բնակութեան վայրերում էին գտնուում եւ անհրաժեշտութեան դէպքում ներկայանում էին թագաւորին կամ սպարապետին: Արքունական զօրքերը պէտք է տեղակայուած լինէին յատկապէս Անիի պաշտպանական գօտին կազմող բերդերում²⁹, որոնք Բագրատունեաց մայրաքաղաքի հետ միասին համարուում էին միասնական տարածք: Այդ ամրոցների թիւը՝ ըստ «Բարթիլի մատեանի», տասն էր³⁰:

Ժ. դարի վերջերին-ԺԱ. դարի սկզբներին Անիի թագաւորութիւնում ազդեցիկ դիրք էին ձեռք բերել այնպիսի իշխանական տներ, որոնք զգալի ռազմական ուժ ու-

27 Նոյն տեղում, էջ 85:
 28 Նոյն տեղում, էջ 12:
 29 Տե՛ս Ա. Տէր-Ղեւոնդեան, Բագրատունեաց թագաւորութեան պետական կարգը. «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. III (ՀՀ ԳԱԱ հր.), էջ 276:
 30 Տե՛ս Картелис уховреба, Тбилиси, 2008, с. 155.

նէին: Այսպէս՝ Ապիրատ իշխանը 12 հազար ազատներից կազմուած զօրք ունէր եւ վճռականօրէն միջամտում էր Անիի թագաւորութեան ներքաղաքական կեանքին: Երբ Աշոտ Դ-ն Թալինում խաբէութեամբ ձերբակալեց Յովհաննէս Սմբատին եւ յանձնարարեց Ապիրատ իշխանին սպանել աւագ եղբօրը, «յանդուզն ստորական անսաց» եւ Անիում կրկին գահ բարձրացրեց Յովհաննէս Սմբատին³¹: Ապիրատեանների (Հասանեանների) տոհմն իր ռազմական հզօրութեան շնորհիւ ազդեցիկ դիրք ունէր Անիում ամբողջ ԺԱ. դարի ընթացքում եւ պահպանել էր դիրքերը ընդհուպ մինչեւ յաջորդ դարի վերջերը³²: Եթէ ենթադրենք, որ մօտաւորապէս միեւնոյն թուաքանակով զօրքեր ունէին նաեւ Պահլաւունիները, Վեստ Սարգսի տոհմակիցները, Սմբատ Մագիստրոսը եւ սկզբնաղբիւրներում բիւզանդական բարձր տիտղոսներով յիշատակուող միւս հայ իշխանները, ապա արքունական գնդի թուաքանակի (55 հազար) վերաբերեալ Մատթէոս Ուռհայեցու տեղեկութիւնը միանգամայն հաւաստի է ներկայանում:

Ամփոփելով՝ պէտք է նշենք, որ արքունական բանակը թագաւորական իշխանութեանը հաւատարիմ զօրքն էր, այն վերջնականօրէն ձեւաւորուում է Ժ. դարի կէսերին եւ մինչեւ պետութեան անկումը արքունական բանակն է, որ ետ է մղում բիւզանդական բանակի յարձակումները: Հէնց այս փաստը վկայում է արքունական բանակի արհեստավարժութեան եւ կենսութեան մասին:

Մարզպանական զօրքը կազմուում էր Բագրատունիների գերիշխանութիւնն ըն-

31 Վարդան Վարդապետ. Հատարումն պատմութեան (գրաբար տեքստն ըստ Վենետիկի 1862 թ. տպագրութեան), Երեւան, 2001, էջ 102-103:
 32 Տե՛ս Կ. Մաթեոսեան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում. «Բանբեր Մատենադարանի», 18, Երեւան, 2008, էջ 67-93:

դունող այլ իշխանութիւնների եւ թագաւորութիւնների զօրքերից: Եթէ հայկական իշխանութիւններից հաւաքադրուած զօրքը միասնական պետութեան շրջանում պատմիչները յիշատակում են նախարարական զօրք անուամբ, ապա մասնատուածութեան շրջանում այն անուանում են մարզպանական (մարզպետական) գունդ³³:

Մարզպանական գնդի հիմնական մասը կազմում էին ենթակայ թագաւորութիւններէի զօրքերը, որոնց գումարում էին այլ իշխանութիւնների զօրաջոկատները: Աշոտ Գ-ի իշխանութիւնների զօրքը կազմում յիշատակի օրօք հայոց բանակի կազմում իշխանութեան եւ ենթակայ բոլոր չորս թագաւորութեան ներկայ բոլոր չորս թագաւորութեան ներկայ թագաւորութեան (Տալի-Չոթիւնների՝ Սիւնիքի, Աղուանքի (Տալի-Չոթիւնների), Կարսի, Վասպուրականի թագաւորների, Անձեւացիքի, Սասունի զօրքերը. «Յայնժամ ամենայն թագաւորացունքն Հայոց՝ ազատքն եւ իշխանքն եւ ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն կապանին Փիլիպպէրատունի. թագաւորն կապանին Փիլիպպէրատունի. թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս եւ թագաւորն Աղուանից Վասպուրական կարուց տէրն եւ Սենեքերիմ Վասպուրական կարուց տէրն եւ Գուրգէն Անձեւացեաց տէրն նիս տէրն եւ Գուրգէն Անձեւացեաց տէրն եւ բովանդակ ամենայն տունն Սասանու. եւ բանակ հարեալ ի Հարբայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար»³⁴: Ասողիկը եւս մարզպանական զօրքի կազմում նշում է՝ Վասպուրականից, Սիւնիքից, Աղուանքից, Կարսից հաւաքադրուած գնդերը. «Եւ նորա ստեալ գամենայն զօրս Հայոց եւ զԳագիկ զեղբայր իւր՝ գնաց առ նոսա ի գաւառն Ջաւախաց. եւ բանակին ի գիւղն, որ կոչի Դիւլեակաց. եւ մանուկն Աբաս թագաւորն կարուց լեկն, եւ մանուկն Աբաս թագաւորն կարուց կարմրազգեստ զգունդն իւր ունելով: Եւ աւանայն զօրն վրաց եւ Վասպուրականի, Սիւնեաց եւ Աղուանից իշխանքն միահաւաք լինէին ընդգէմ Ափխազաց զօրուն»³⁵:

33 Մատթէոս Ուռհայեցի, էջ 3:
 34 Նոյն տեղում, էջ 17:
 35 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, էջ 252:

գաւառն Զաւախաց. եւ բանակին ի գիւղն, որ կոչի Դիւեկն, եւ մանուկն Աբաս թագաւորն կարուց կարմրազգեստ զգունդն իւր ունելով: Եւ ամենայն զօրն վրաց եւ վասպուրականի, Սիւնեաց եւ Աղուանից իշխանքն միահաւաք լինէին ընդդէմ Ափսազաց զօրուն»⁴⁹:

Այնուհանդերձ պէտք է նշենք, որ աւատատիրութեան դարաշրջանի բանակները կայուն թուաքանակ չունէին: Դա վերաբերում է ինչպէս եւրոպական երկրներին, այնպէս էլ Բիւզանդական կայսրութեանը⁵⁰, ինչը նշանակում է, որ Հայաստանում եւս ոչ միշտ էր հաւաքագրւում նախատե-

49 Նոյն տեղում, էջ 252:

սուած քանակութեամբ զօրք:

Ակադեմիկոս Յակոբ Մանանդեանի ղիպուկ ղիտարկմամբ՝ «Բաժանուած լինելով անջատ մանր թագաւորութիւնների՝ Հայաստանը թէեւ քաղաքականապէս շատ թոյլ էր, սակայն ռազմական տեսակէտից հայութիւնը Առաջաւոր Ասիայի զօրեղ ժողովուրդներից մէկն էր»⁵¹: Քաղաքական մասնատուածութիւնն էլ զրկում էր Բագրատունեաց Հայաստանը թշնամիների դէմ միասնաբար հանդէս գալու եւ ունեցած ռազմական ուժերը արդիւնաւէտ գործածելու հնարաւորութիւնից:

50 В. Колташов, Византийская армия IV-XIII веков, <http://byzantion.ru/polemos/ByzArm.htm>
51 Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, «Երկեր», հտ. Գ, Երևան, 1977, էջ 15:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 1918 Թ. ԱՇՆԱՆԸ

Աշոտ Հայրունի

Թուրքական կառավարութիւնը, չկարողանալով միանշանակօրէն մերժել սովահարութեան մատնուած անօթեւան բազմահազար հայ փախստականների վերադարձը հայրենի բնակավայրեր թոյլատրելու վերաբերեալ գերմանական կառավարութեան եւ բանակի գլխաւոր հրամանատարութեան կողմից հնչող կոչերն ու պահանջները, ի վերջոյ կարծես հարկադրուած եղաւ գնալ որոշ զիջումներ: Էնվերը Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Բեռնշտորֆին/եւ այնտեղ գտնուող հայ պատուիրակներին իր պատրաստակամութիւնն էր յայտնել Լոռին եւ Փամբակը «որոշակի պայմաններով» հայերին տրամադրելու վերաբերեալ եւ, բացի այդ, ինչպէս վկայում էր նաեւ նրա կողմից օգոստոսի 3-ին գերմանական բանակի գլխաւոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ Պաուլ Ֆոն Հինդենբուրգին ուղարկուած նամակը, համաձայնել էր հայերի վերադարձը թոյլատրել, բայց միայն մասնակիօրէն, այսինքն՝ դէպի Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծից առնուազն 20 կմ հեռաւորութեան վրայ ընկած տարածքը եւ նաեւ այն շրջանները, որտեղ մուսուլմանների եւ հայերի միջեւ մարտեր տեղի չէին ունեցել (ընդ որում՝ նա այդ տարածքներից շեշտում էր մասնաւորապէս Բաթումի շրջանը), իսկ փախստականութեան անվերապահ, գանգուածային վերադարձը նա շարունակում էր մերժելի համարել՝ դա «հիմնաւորելով» այն պատճառաբանութեամբ, թէ նրանց բնակավայրերից շատերը գտնուում էին թուրքական բանակի թիկունքում, եւ վերջինիս համար կը ստեղծուէր վտանգաւոր իրադրութիւն, իսկ միւս կողմից՝ բանակը,

որը պէտք է ձեռնամուխ լինէր Բաքուի դրամանը, թիկունքի հետ իր յետադարձ կապից կը մեկուսացուէր¹:

Թուրքական կառավարութիւնն, այնուհանդերձ, իր վերոնշեալ յանձնառութիւններով նոյնպէս սոսկ ժամանակ շահելու նպատակ էր հետապնդում եւ մտադիր էր դրանք իրագործել: Դա ակնյայտ դարձաւ այն ժամանակ, երբ գեներալ Ֆոն Զեկտը, տեղեկանալով Լոռին եւ Փամբակը հայերին յանձնելու՝ էնվերի համաձայնութեան մասին, իր կողմից եւս հեռագրով համապատասխան կարգադրութիւն կատարեց՝ այն ուղարկելով Բաթում եւ այդ մասին տեղեկացնելով թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Կրես ֆոն Կրեսենշտայնին: Նրա հեռագրի՝ Բաթում Կրեսենշտայնին երկու ժամ անց, հասնելուց տասացիորէն երկու ժամ անց, սակայն, ինչպէս վկայում էր Ֆոն Կրեսը, մի նոր հեռագիր է ստացւում էնվերի կող-

1 Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 418-420: Այսուհետեւ այդ ժողովածոյի փաստաթղթերից կատարուած լրումները համեմատել դրանց վերանայուած տեքստերի հետ, մասնի որ ժողովածոյի առաջին փաստաթղթերում կրճատումներ ի յայտ գալու դէպքում անստի եւս առնուել տ օգտագործուել եւ անել դրանց վերանայուած տեքստերը: St'u Wolfgang Gust, Revidierte Lepsius-Edition, <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De? OpenFrameset>: Էնվերի վերոնշեալ անակոյմ ամրագրուած այդ տեսակետն, ի դէպ, համոզուածու էր այն հիմնական պատրուակը, որով թուրքական կողմը փորձում էր իր գերմանացի դաշնակցին համոզել փախստականների զանգուածային վերադարձի ռազմավարական անպատասխանատուութիւնը: